ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2023թ. **N_____-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 182-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի «Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N 182-Ն որոշման հավելվածի 22-րդ, 23-րդ, 41-րդ, 42-րդ, 59-րդ, 60-րդ, 61-րդ, 74-րդ, 81-րդ, 102-րդ, 103-րդ, 127-րդ, 130-րդ, 155-րդ, 157-րդ, 162-րդ, 164-րդ, 192-րդ, 197-րդ, 214-րդ, 215-րդ, 217-րդ, 218-րդ կետերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 182-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի «Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N182-Ն որոշման մեջ փոփոխությունների կատարումը պայմանավորված է Երևան քաղաքում արտադպրոցական (նախնական մասնագիտական գեղարվեստական կրթություն իրականացնող) ուսումնական հաստատությունների՝ երաժշտական, արվեստի և կերպարվեստի դպրոցների գործունեության միասնական և ուղղակի համակարգման, ծրագրային և մեթոդական աջակցության նպատակային ապահովման, կադրային ընդհանուր քաղաքականության իրականացման անհրաժեշտությամբ:

Երևանի քաղաքապետարանը մշակութային կրթության ոլորտում իրականացնում է մի շարք ծրագրեր և միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացման և ուսուցման, համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում հետագա ուսման նախապատրաստման, դպրոցահասակ երեխաների համար արվեստի տարբեր ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի կազմակերպման, երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացման, օժտված և տաղանդավոր երեխաների և պատանիների բացահայտման, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորման հետ կապված գործընթացների պատշաճ իրականացմանը:

Ներկայում Երևանի ենթակայությամբ գործում են 26 երաժշտական, արվեստի և կերպարվեստի դպրոցներ (այսուհետ՝ Դպրոցներ), որոնցից 3-ը գործում են Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ, իսկ 23-ը, Երևան քաղաքի ավագանու 08.02.2011թ. «Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N182-Ն որոշման համաձայն, հանձնված են վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը:

Դպրոցների տարածքային բաշխվածությունը հետևյալն է՝

1. Աջափնյակ վ/շ -3
2. Ավան վ/շ -1
3. Արաբկիր վ/շ -2

4. Դավթաշեն վ/շ -1
5. Էրեբունի վ/շ -2
6. Կենտրոն վ/շ-5
7. Մալաթիա-Սեբաստիա վ/շ -2
8. Նոր Նորք վ/շ -2
9. Նորք-Մարաշ վ/շ -1
10. Նուբարաշեն վ/շ -1
11. Շենգավիթ վ/շ -2
12. Քանաքեռ-Զեյթուն վ/շ -4

Դպրոցներում դասավանդվում են հետևյալ մասնագիտությունները՝ ազգային, լարային, փողային նվագարաններ, հարվածային գործիքներ, կերպարվեստ, դեկորատիվ-կիրառական արվեստ, քանդակագործություն, գրաֆիկա, երգեցողություն, պարարվեստ, թատրոն:

2023թ. նոյեմբերի 1-ի դրությամբ Դպրոցներում սովորում են 8888 սովորողներ (8611 հիմնական ուսուցման և 277 պետպատվերով ուսուցման բաժիններ): Բացի այդ, դպրոցներում գործում են գեղագիտական ուսուցման բաժիններ, որտեղ սովորողները ստանում են ընդհանուր գեղագիտական կրթություն:

Արտադպրոցական ուսուցման ոլորտը կանանոնակարգող օրենքի բացակայության պայմաններում դպրոցները բախվում են մի շարք խնդիրների, որոնց լուծման համար անհրաժեշտություն է առաջացել մշակել գործողությունների կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցության ծրագրեր, ապահովել դրանց միասնական կիրառումը, որը, դպրոցների ենթակայության ներկա կարգավիճակով խնդրահարույց է:

Մասնավորապես, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի «Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N 182-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ դպրոցների մասով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությամբ, 2-րդ կետի ա), գ), դ), ե) և է) կետերով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները, բացառությամբ Որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերի, պատվիրակվել են Երևանի վարչական շրջանների ղեկավարներին: Ըստ այդմ՝ դպրոցի ընդհանուր կառավարումը, նրա բնականոն գործունեության ապահովումը, դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար պատասխանատվություն է կրում վարչական շրջանի ղեկավարը, որը նաև կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, կասեցնում կամ ուժը կորցրած է

ճանաչում պետական կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները, լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները, վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ, հաստատում է պետական կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը:

Դպրոցների կառավարման լիազոր մարմնի գործառույթների մեծ մասը պատվիրակված է վարչական շրջանների ղեկավարներին, որը թույլ չի տալիս իրականացնել դպրոցների բնականոն գործունեության և զարգացման ուղղությամբ տարվող միասնական քաղաքականությունը, հնարավորություն չի տալիս ամբողջությամբ իրականացնել ոլորտի համաչափ զարգացմանն ուղղված ծրագրերը, ոլորտում պետական քաղաքականության իրականացման միասնական ապահովմանն ուղղված գործընթացները: Ըստ էության, դպրոցների կառավարման լիազորությունները հանձնված են Երևանի 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերին, որոնք, ոլորտի իրավական դաշտի անկատարության պայմաններում, բնականաբար, հնարավորություն չեն ունենում պատշաճ կերպով ապահովել արտադպրոցական ուսուցման կարևորագույն բնագավառի միասնական ու շարունակական զարգացումը: Ըստ այդմ, մեկուսացված և տեղային լուծումներ ու նշանակություն ունեցող ծրագրերն ու միջոցառումների իրականացումը ռիսկային է և կարող է բերել ոլորտում համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակական ցուցանիշների էական տարբերության և անհամաչափ տարածքային զարգացման:

Մյուս կողմից, դպրոցների հետ կապված մի շարք ծրագրեր իրականացվում են Երևանի քաղաքապետարանի կողմից, այդ թվում՝ Երևանի երաժշտական և արվեստի դպրոցների ամենամյա մրցույթ-փառատոնը, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոնը, երաժշտական և արվեստի դպրոցների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերման ծրագիրը, պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի գործունեության ծրագիրը, այլ ծրագրեր և միջոցառումներ: Բացի այդ՝ Երևանի քաղաքապետի 2018 թվականի հունվարի 12-ի հ. 61-Ա որոշման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչությանն են վերապահված դպրոցներում սովորողների, նոր ընդունված երեխաների, դասատուների տարիֆաորակավորման ցուցակների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, հաշվառման իրականացումը, դպրոցից դպրոց տեղափոխության կազմակերպումն ու վերահսկողությունը, դպրոցներում սովորող երեխաների թվաքանակի և վճարումների մասին տեղեկատվության հավաքագրումը, մշակումն ու դպրոցների ամսական ֆինանսավորման համար հիմք հանդիսացող տեղեկատվության փոխանցումը աշխատակազմի ֆինանսական վարչություն: Վարչության կողմից իրականացվում է

դպրոցների կարիքների գնահատում, պետական պատվերի բաշխում, անհրաժեշտ գործիքների ձեռքբերման և տրամադրման հետ կապված գործառույթներ: Վարչությունը իրականացնում է նաև տեղական վճարների սահմանման, արտոնությունների կիրառման հետ կապված առաջարկությունների ներկայացումը: Միաժամանակ՝ ոլորտի լիազոր պետական մարմնի հետ համագործակցությամբ աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչությունը մշակում է դպրոցների տարեկան ուսումնական օրինակելի պլանները, առարկայական ծրագրերը, դպրոցներում կազմակերպում է վարպետության դասընթացներ, իրականացնում մանկավարժական աշխատողների ատեստավորման գործընթացի հետ կապված անհրաժեշտ գործառույթները և այլն: Թվարկված վերոգրյալ բոլոր գործառույթներն ու ծրագրերն իրականացվում են դպրոցների հետ ուղիղ շփման, հավաքագրված տեղեկատվության վերլուծության և մոնիտորինգի արդյունքում:

Հարկ է նշել, որ ներկայում Երևանի քաղաքապետարանում քննարկվում են դպրոցների շրջանավարտների ավարտական միասնական քննությունների կազմակերպման, ավարտական վկայականի միասնական ձևանմուշի հաստատման, վկայականների հաշվառման, մանկավարժական կազմի ընտրության և որակավորման բարձրացման հետ կապված մի շարք նախաձեռնությունների իրականացման հետ կապված հարցերը, որոնց կենսագործումը էական դրական ազդեցություն կունենա դպրոցների կողմից մատուցվող ծառայությունների որակի վրա, ներկայացված որոշման ընդունմանը զուգահեռ՝ նոր հնարավորություններ կստեղծի Երևան քաղաքում մշակութային կրթության ոլորտի հեռանկարային զարգացման համար:

Ելնելով վերոգրյալից, կարևորելով ոլորտում համայնքի կողմից միասնական քաղաքականություն վարելու, ըստ այդմ՝ մշակութային կրթության շարունակական զարգացման համար նոր մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, առաջարկվում է կատարել փոփոխություններ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի «Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N 182-Ն որոշման մեջ, դպրոցների մասով ուժը կորցրած ճանաչել Երևանի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու դրույթը (կետերը) և երաժշտական, արվեստի և կերպարվեստի դպրոցների կառավարման ամբողջական գործառույթները վերապահել Երևանի քաղաքապետարանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**